

մեղրամոմով կազմուած էին , ու տեղ տեղ հազիւ մէկ հազարորդամէրը թանձրութիւն ունէին . գանկին և երեսին ոսկորները չկային . քննելով այս կմախքներուն պահպանութեան վիճակը տարակոյս չմնաց որ այն մարմինները գըլխատեալ թաղուած էին . աչուրնին ապակիէ էր ու մեղրամոմի մէջ ագուցուած : Այս երկու դիակներուն մօտ , որոնց մէկն երիտասարդ և մէկալը օրիորդ մըն էր , կային քանի մը ուղղանկիւն ոսկորէ դանակի բերաններ . ոտուրնուն քով ալ ապակիէ ամաններ , պղինձէ կաղամար մը և փայտէ արկղի կտուանքներ , որոնցմէ մէկուն վրայ կ'երևնար Տ (է*) գիրը փորագրեալ , աւրուած արձանագրութեան մը միակ հետքը : Այս տուփս ատենօք պղնձէ փականքով մը փոցուած է եղեր և մէջն ալ պղտիկ շիշեր դրած . դարձեալ ոսկեզօծած հողի կտորուանքներ , հայելի մը և մազի երկու գնդասեղ : Վիոկղետիանոսի ստակ մը գետնէն գտնուելով՝ իմացուեցաւ այս նշխարաց ժամանակը : Այս գիւտը հնագիտաց մեծ հետաքրքրութեան պատճառ եղաւ . ամէնքը տեսակ տեսակ մեկնութիւններ տուին : Յաջորդ տարին (1853ին) Պ . Ռեուարդոս Վուարանդա , Վաբուլի համալսարանին հնախօսութեան և յունական մատենագրութեան դասատուն՝ կարծիք մը հրատարակեց որ շատ հաւանական սեպուեցաւ : Շատ դժուար է , կ'ըսէ , որ այս դիակները 303ին եղած մեծ հալածանաց ատենի մարտիրոսաց մարմինք ըլլան . վասն զի թէ և երբեմն Վրիստոնէից գերեզմանաց մէջ ալ կը գտուին հեթանոսական զարդեր ու նշանականք , բայց միշտ քրիստոնէական կրօնքի նշաններ ալ պակաս չեն ըլլար . ինչպէս , մարտիրոսական պսակ մը , խաչ մը , և Վրիստոս անուան սկզբնագիրեր : Աւելի հաւանական է որ ասոնք քաղաքական հալածանաց զոհեր ըլլան . վասն զի շատ հեղ աքսորելոց գլուխները նոյն

գաւառին կուսակալին և կամկայսեր կը խաւրուէին : Արդ գիտնալով որ նոյն իսկ Վիոկղետիանոս շատ անգամ հրաման կուտար , որ ատ կերպով սպաննուողաց յուղարկուորութիւն ընեն , և թէ ինչպէս հիները մեռելոց վրայ մեծ յարգանք մը ունէին , Պ . Վուարանդա կ'ըսէ թէ այս մեղրամոմէ գլուխները շինուած են որ ատ գլխատեալ դիակներուն սոսկումը վերցնեն , և հեթանոսական յուղարկուորութեան հանդէսները մեծարանօք կատարուին : Վայց ով էին արդեօք այն դժբախտները՝ որ ատանկ սև ճակատագիր մը ունեցան : Արիտասարդին քով գտուած կաղամարէն կը գուշակուի թէ մատենագրութեանց հետեող մ'էր . թերևս կծու երգիծաբանութիւն մը կայսեր բարկութիւնը շարժեր էր իր և իւր ընտանեացը վրայ : Վաբուլի թանգարանին սրահից մէկուն մէջ դրուած է հիմա ատ գլուխը Ստաբէաի , Պոմպէաի և Հերգուլանոնի գեղեցիկ նկարներուն մէջ . գծագրութիւնն երիտասարդի և ուժով կերպարանք մը կ'ընծայէ :

Վժբաղգաբար ժամանակը գոյները ջնջեր է , և մեղրամոմին սևութիւնը աւելի զգալի կ'ըլլայ հանգչած բամբակէ բարձին վրայ :

Բարոյական առածք :

Լաւ է ճշմարիտ բարեկամէ մը դառն կերպով կշտամբուիլ . քան թէ սուտ գովասանքներով փառաւորուիլ : — Խրատելն ու խրատուիլը ճշմարիտ բարեկամութեան բուն նշանն է . մէկը պէտք է որ համարձակ խրատէ , և միւսն ալ յօժարութեամբ ու առանց դժկամակելու ընդունի :

Աւելի ընտրելի է ճշմարտութիւն խօսող թշնամի մը , քան թէ կեղծաւոր բարեկամ մը , որուն ամէն մտածածը , խօսածն ու ըրածը միայն իր շահուն համար է .